"Spinnaker Group"LLC
1 Bagramyan str, 0002
Yerevan, Armenia
Tel: +37410 609090
E-Mail: info@spinnaker.am
Web: www.spinnaker.am

Զբոսաշրջային ծառայությունների ամրագրման հիմնական դրույթներ և պայմաններ

1. Սույնով սահմանվում են «Սպիննակեր Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Տուր-օպերատոր») կողմից Հաճախորդին մատուցվող ծառայությունների կարգն ու պայմանները և հանդիսանում են այդ ծառայություններից օգտվելու առաջարկ (օֆերտա):
2. Միանալով առաջարկված պայմաններին՝ Հաճախորդ(ներ)ը հավաստում է, որ ընթերցել և հասկացել է «Զբոսաշրջային ծառայությունների ամրագրման հիմնական դրույթներ և պայմանները» և համաձայնում է անվերապահորեն ընդունել ստորև ներկայացված դրույթները և պայմանները ամբողջությամբ (ակցեպտ), իսկ Տուր-օպերատորը պարտավորվում է ապահովել պատվիրված ծառայությունների պատշաճ կերպով մատուցումը:
3. Հաճախորդն այն անձն է, ով լրացնում է զբոսաշրջային ծառայությունների ամրագրման հայտը՝ սահմանված ձևով կամ հայտը լրացնելու առաջադրանքով դիմում է Տուր-օպերատորին:
4. Հայտը լրացնելու և հաստատելու պահից Հաճախորդը կրում է զբոսաշրջային ծառայությունների ամրագրման, կանխավճարի և մնացած գումարի վճարման, ամրագրման փոփոխման կամ չեղարկման, անհրաժեշտ լրացուցիչ վճարների մուծման և ամրագրման հետ կապված այլ հարցերի համար ամբողջ պատասխանատվությունը:
5. Հաճախորդը պետք է լինի առնվազն 18 տարեկան ամրագրման հայտի ստորագրման պահին, հայտում նշված այլ անձանց անունից և փոխարեն գործելու իրավունք ունենա:
6. Սույնով Հաճախորդ(ներ)ը համաձայնում է անվերապահորեն ընդունել ստորև ներկայացված դրույթները և պայմանները ամբողջությամբ և վճարել ամրագրված ծառայությունների համար, իսկ Տուր-օպերատորը պարտավորվում է ապահովել դրանց պատշաճ կերպով մատուցումը:
7. Հաճախորդը հայտարարում և ընդունում է, որ ծառայությունների ամրագրման հայտը լրացնելու համար տրամադրված տեղեկատվությունը, այդ թվում՝ երրորդ անձանց վերաբերյալ տեղեկատվությունը, ստույգ է և ճշգրիտ:
8. Հաճախորդը հայտարարում և ընդունում է, որ ծանոթ է ճամփորդության բոլոր պայմաններին, գտնվում է լիարժեք առողջ վիճակում, ֆիզիկապես և հոգեպես ընդունակ է մասնակցելու շրջագայության ծրագրի բոլոր միջոցառումներին և տեղյակ չէ որևէ հակացուցումների և/կամ սահմանափակումների մասին, որոնք կարող են խաչընդոտել մասնակցությանը կամ ճամփորդության ընթացքում առողջությանը վնաս պատճառել՝ հաշվի առնելով ճամփորդության դժվարությունները:

Գաղտնիություն

9. Հաճախորը տալիս է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով պահանջվող համաձայնությունը, որպեսզի Տուր-օպերատորը սույն պայմաններում նշված նպատակներով մշակի և օգտագործի Հաճախորդին վերաբերող անձնական տվյալները:
10. Տուր-օպերատորը պարտավորվում է պահպանել անձնական տվյալների գաղտնիությունը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որոնք ուղղված են անձնական տվյալների պաշտպանվածությունը դրանց անօրինական մուտք գործելուց, անձնական տվյալների անօրինական օգտագործումից, կրկնօրինակումից, տարածումից և այլն:
11. Հաճախորդը թույլատրում է Տուր-օպերատորին շրջագայության ընթացքում կատարել լուսանկարում և տեսաձայնագրում բացառապես գովազդային նյութերում օգտագործելու համար:

Իրավունքներ և պարտականություններ

12. Տուր-օպերատորը պարտավոր է հաճախորդին ծանոթացնել շրջագայության ծրագրի մանրամասներին, ինչպես նաև տեղեկացնել այցելության երկրի առանձնահատկությունների, օրենքների, յուրահատուկ ավանդույթների և հնարավոր վտանգների մասին:
13. Հաճախորդը պարտավոր է ենթարկվել այցելության երկրի օրենքներին, կրոնական, մշակութային վայրերի, հյուրանոցների և այլ զբոսաշրջային վայրերում գործող կանոններին, ինչպես նաև ուղեկցողի պահանջած անվտանգության կանոններին և շրգայաության ծրագրի բնականոն ընթացքն ապահովելու համար տրվող ցուցումներին: Հաճախորդը պատասխանատվություն է կրում Տուր-օպերատորին հասցված ցանկացած

"Spinnaker Group"LLC
1 Bagramyan str, 0002
Yerevan, Armenia
Tel: +37410 609090
E-Mail: info@spinnaker.am
Web: www.spinnaker.am

վնասի կամ կորստի համար, որն առաջացել է տրված հրահանգների, կարգադրությունների, օրենքների, կանոնների, պահանջների և այլն խախտման հետևանքով:

14. Ամրագրման հայտի ստորագրմամբ Հաճախորդը հաստատում է, որ 8-րդ կետում նշված տեղեկատվությունն իրեն տրամադրվել է Տուր-օպերատորի կողմից:
15. Հաճախորդը պարտավոր է ուղևորության օրը իր մոտ ունենալ բոլոր անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերը՝ ներառյալ օժանդակող փաստաթղթերը (օրինակ՝ մուտքի արտոնագրով անձնագիրը, ապահովագրական հավաստագիրը և այլն):
16. Հաճախորդը պարտավոր է Տուր-օպերատորին ամրագրում կատարելիս տեղեկացնել հատուկ կարիքների մասին (առկայության դեպքում):
17. Հաճախորդը պետք է ունենա առողջության ապահովագրություն ճամփորդության ամբողջ ընթացքում:

Հյուրանոցների դասակարգում

18. Հյուրանոցի՝ ըստ աստղերի դասակարգման վերաբերյալ տեղեկատվությունը Հաճախորդին տրամադրվում է www.booking.com և www.tripadivsor.com ինտերնետային կայքերում տեղադրված ամբողջական տեղեկությունների հիման վրա:

Վճարումներ

19. Ծառայությունների արժեքը որոշվում է համապատասխան ծառայությանը վերաբերող՝ ինտերնետային կայքում նշված գներին համապատասխան:
20. Ծառայությունների ապրագրման օրը Հաճախորդը վճարում է հայտում նշված ընդհանուր արժեքի 50 (հիսուն) տոկոսը: Գումարի մնացած մասի՝ 50 (հիսուն) տոկոսի վճարումը կատարվում է մինչև ամրագրման հայտում նշված վճարման վերջնաժամկետի օրը: Վճարումը կատարվում է ՀՀ դրամով կանխիկ կամ անկանխիկ եղանակով՝ Տուր-օպերատորի՝ ամրագրման հայտում նշված բանկային հաշվին փոխանցման միջոցով:
21. Վճարումը համարվում է կատարված Տուր-օպերատորի՝ ամրագրման հայտում նշված հաշվեհամարին վճարման ենթակա գումարի մուտքագրվելու պահից:

Չեղարկում

22. Եթե Հաճախորդը հրաժարվում է ամրագրված/պատվիրված ծառայություններից, ապա վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել տույժեր՝ ամրագրված ծառայությունների համար վճարված կանխավճարը/արժեքը կամ դրա մի մասը չվերադարձնելու ձևով՝ հետևյալ պայմաններով.
    - **ոչ ուշ, քան ուղևորության նախորդող օրվանից 40 օր առաջ** Տուր-օպերատորին տեղեկացնելու դեպքում, Տուր-օպերատորը պարտավորվում է հաճախորդին վերադարձնել ստացված գումարը ամբողջությամբ.
    - **ոչ ուշ, քան ուղևորության օրվանից 39-31 օր առաջ** Տուր-օպերատորին տեղեկացնելու դեպքում, չի վերադարձվի ընդհանուր արժեքի 10%-ի չափով գումարը.
    - **ոչ ուշ, քան ուղևորության օրվանից 30-15 օր առաջ** Տուր-օպերատորին տեղեկացնելու դեպքում, չի վերադարձվի ընդհանուր արժեքի 30% չափով գումարը.
    - **ոչ ուշ, քան ուղևորության օրվանից 14 օր առաջ** Տուր-օպերատորին տեղեկացնելու դեպքում, չի վերադարձվի ընդհանուր արժեքի 100% չափով գումարը:

Ամրագրման պայմանների փոփոխություն

23. Տուր-օպերատորը իրավունք ունի բացառիկ դեպքերում և անհրաժեշտությամբ պայմանավորված, Հաճախորդին նախապես տեղեկացնելով փոփոխություններ կատարել շրջագայության ծրագրի մեջ՝ ներառյալ զբոսաշրջիկների տեղափոխման եղանակի, ճանապարհորդության ժամանակացույցի կամ երթուղու պայմանների փոփոխմամբ՝ պահպանելով ճամփորդության հիմնական համարժեք պայմաններ:
24. Տուր-օպերատորը իրավունք ունի փոփոխել շրջագայության ծրագրով առաջարկված տրանսպորտային միջոցները և կացարանները՝ փոխարինելով նույն տեսակի, դասի տրանսպորտային միջոցներով և կացարաններով:
25. Ճանապարհորդության օրերը ֆիքսված են և կարող են փոփոխվել միայն ֆորս-մաժորային իրավիճակների ի հայտ գալու դեպքում:
26. Ֆորս-մաժորային իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցական

"Spinnaker Group"LLC
1 Bagramyan str, 0002
Yerevan, Armenia
Tel: +37410 609090
E-Mail: info@spinnaker.am
Web: www.spinnaker.am

միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում ստանձնած պարտավորությունների կատարումը:

27. Ֆորս-Մաժորային իրավիճակների ի հայտ գալու պարագայում, տուր-օպերատորը իրավունք ունի հետաձգել ծառայությունների մատուցումը կամ փոխարինել այցելության երկիրը՝ նախապես համաձայնեցնելով Հաճախորդի հետ:
28. Թռիչքի և ուղեբեռի հետ կապված խնդիրները կարգավորվում են տվյալ թռիչքը իրականացնող ավիաընկերության կանոնների և օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (IATA)-ի օրենքներով:
29. Տուր-օպերատորը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի ուղեբեռի, անձնական իրերի, փաստաթղթերի և գումարի կորստի համար:
30. Ավիատոմսերը և ճամփորդական այլ փաստաթղթերը տրամադրվում են ուղևորության օրվանից առնվազն 7 (յոթ) օր առաջ:
31. Հաճախորդը կարող է հրաժարվել ամրագրված ծառայություններից առանց տույժեր վճարելու միայն, եթե ամրագրման պայմանների փոփոխությունը առաջացրել է ընդհանուր արժեքի 10%-ը գերազանցող չափով փոփոխություն:

Ամրագրված ծառայությունների փոխանցում

32. Հաճախորդը կարող է ամրագրված ծառայությունները փոխանցել երրորդ անձանց (այսուհետ՝ «Փոխստացող»)՝ միայն Տուր-օպերատորի նախնական գրավոր համաձայնությամբ, պայմանով, որ՝
    - Հաճախորդը այդ մասին տեղեկացրել է Տուր-օպերատորին ուղևորության նախորդող օրվանից առնվազն 14-30 օր առաջ և տրամադրել Փոխստացողի վերաբերյալ պահանջված տեղեկությունները և վերջինս բավարարում է ծառայությունից օգտվելու համար սահմանված պահանջներին (օրինակ՝ ունի պաշտաճ ճամփորդական փաստաթուղթ, առողջական վիճակ և այլն) և
    - Հաճախորդը կամ Փոխստացողը պարտավորվում է վճարել/հատուցել փոխանցման համար պահանջվող վճարները:
33. Փոխանցման գումարը հաշվարկվում է փոխանցումը կատարելուց առաջ:
34. Հաճախորդը և Փոխստցողը կրում են համապարտ պարտավորություն Տուր-օպերատորի առջև ծառայության ընդհանուր արժեքն ամբողջությամբ վճարելու համար:

Վեճերի լուծում

35. Կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Այն դեպքում, երբ բանակցությունները սկսելու պահից 20 օրվա ընթացքում չեն տալիս որևէ արդյունք, ապա այդ վեճը պետք է լուծվի իրավասու դատարանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ՀՀ գործող օրենսդրության կիրառմամբ:

Այլ պայմաններ

36. Սույն ամրագրման հայտը ուժի մեջ է մտնում Հաճախորդի և Տուր-Օպերատորի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև ամրագրման հայտում նշված ծառայությունների կատարումը: